

ԳԱԼՈՒԲՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱՆՊԱՍՏՆԵՐ

2021-ի ՉԵԿՈՅՑ

ՆԵՐԱՃԱԿԱՆ

1956 թուականին սկսեալ աշխարհասփիւռ հայ եւ հայագիտական ոլորտի ուսանողներու համալսարանական կրթաթոշակներ տրամադրելը եղած է Հայկական Համայնքներու Բաժանմունքի հիմնական գործունեութիւններէն մէկը:

2021-ի արդիւնքները կը վերաբերին հետեւեալ վեց կրթանպաստի ծրագիրներուն՝

1. **Հայագիտութեան կրթանպաստներ**
2. **Հայագիտութեան կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ**
3. **Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար**
4. **Բարձրագոյն կրթութեան նպաստ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար**
5. **Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստներ**
6. **Արտակարգ կրթանպաստներ**

ՆԱԽԱՀԱՇԻԻ ՅԱՏԿԱՑՈՒՄ

1. Հայագիտութեան կրթանպաստներ

Կրթանպաստի այս ծրագիրը բաց է Հայագիտութեան մէջ մասնագիտացող ուսանողներու եւ հետազոտողներու, որոնք Master's, PhD, կամ Post Doc-ի կը հետեւին ճանչցուած որեւէ համալսարանի մէջ:

2021-ին, Բաժանմունքը ստացաւ 51 դիմում եւ 13 կրթանպաստ յատկացուց Հայաստանէն, Ֆրանսայէն, Գերմանիայէն, Թուրքիայէն, Ուկրանիայէն, Անգլիայէն եւ Միացեալ Նահանգներէն ուսանողներու: Կրթանպաստներ տարեկան 3000-էն 25,000 Եւրօ էին (յատկացուած առաւելագոյնը երեք տարուան համար): 2018-էն երկու կրթաթոշակ, 2019-էն երկու կրթաթոշակ եւ 2020-էն ինը կրթաթոշակ նորոգուեցան:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ Հայագիտութեան յատկացուած կրթաթոշակներու 2021-ի ընդհանուր պատկերը՝

Հայագիտութեան կրթանպաստներ	Յատկացում (Եւրօ)	Քանակ
Նոր կրթանպաստներ	181,426	13
Նորոգուած կրթանպաստներ	200,633	13
ԸՆԴԱՄԵՆԸ	382,059	26

2. Հայագիտութեան կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ

Կրթանպաստի այս ծրագիրը հայագիտութեան ոլորտին մէջ աշխատող, ակադեմականներու, հետազոտողներու եւ ուսանողներու (Հայաստանէն դուրս) առիթը կ'ընծայէ մասնակցելու գիտաժողովներու, սեմինարներու, հետազոտական ճամբորդութիւններ կատարելու եւ անելին:

2021-ին, Բաժանմունքը ստացաւ 100 դիմում եւ 47 նպաստ յատկացուց. հինգը Վենետիկի Padus-Araxes-ի հայերէնի եւ հայ մշակոյթի խտացեալ դասընթացքներուն հետեւելու համար, եւ 15-ը Արցախի վերաբերեալ հետազոտութիւններու համար:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2021-ին յատկացուած «Հայագիտութեան համար կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ»-ու ընդհանուր պատկերը՝

Հայագիտութեան համար կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ	Ցատկացում (Եւրօ)	Քանակ
Հայագիտութեան կարճաժամկետ դրամաշնորհներ	81,312	27
Padus-Araxes դասընթացքներ	13,900	5
Արցախի հետազոտութիւններ	57,609	15
ԸՆԴԱՄԵՆԸ	152,821	47

3. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար

Կրթանպաստի այս ծրագիրը Հայաստանի մէջ ապրող ուսանողներու, երիտասարդ ակադեմականներու, եւ հետազոտողներու առիթը կ'ընծայէ կարճաժամկետ դասընթացքներու եւ վրապատրաստումի ծրագիրներու հետեւելու, ինչպէս նաեւ միջազգային գիտաժողովներու եւ աշխատանոցներու ընթացքին իրենց աշխատութիւնները ներկայացնելու:

2021-ին, Բաժանմունքը ստացաւ 31 դիմում եւ 19 նպաստ յատկացուց Հայաստանի քաղաքացիներու որ արտերկրի մէջ գիտաժողովներու մասնակցին: Ցատկացուած գումարները 683-էն 2,233 Եւրոյի միջեւ էին, իսկ ընդհանուր գումարը կազմեց՝ 20,453 Եւրօ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2021-ին յատկացուած «Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար» ծրագրին ընդհանուր պատկերը՝

Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի համար	Ցատկացում (Եւրօ)	Քանակ
Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ	20,453	18

4. Բարձրագոյն կրթութեան նպաստ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար

2021-ին կրթանպաստի այս ծրագրին անունը փոխուեցաւ. նախապէս՝ «Նախընթացաւարտութեան կրթանպաստներ» կը կոչուէր, որ վերանուանուեցաւ՝ «Բարձրագոյն կրթութեան նպաստ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար»:

2021-ին, Բաժանմունքը ստացավ 180 դիմում եւ 57 կրթանպաստ յատկացուց: ՄԵԿ նպաստառու հրաժարեցաւ իր կրթանպաստէն: Յատկացուած գումարները 1,000-էն 2,500 Տոլարի միջեւ էին: 2021-ին նախորդող տարիներուն յատկացուած 67 կրթաթոշակ նորոգուեցաւ:

Այս ծրագիրին զուգահեռ Լիբանանի համալսարաններուն մէջ «Յատուկ կրթութիւն» ուսանողներու ծրագիրին պարունակին մէջ 2019-էն 3 կրթաթոշակ նորոգուեցաւ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2021-ին յատկացուած «Բարձրագոյն կրթութեան նպաստ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար»-ու ընդհանուր պատկերը՝

Բարձրագոյն կրթութեան նպաստ՝ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար	Յատկացում (ԵԼՐՕ)	Քանակ
Բարձրագոյն կրթութեան նպաստ – նոր կրթանպաստներ	107,642	56
Բարձրագոյն կրթութեան նպաստ – նորոգուած կրթանպաստներ	146,392	67
Յատուկ կրթութեան ծրագիր Լիբանան – նորոգուած կրթանպաստներ	11,185	3
ԸՆԴԱՄԵՆԸ	265,219	126

5. Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստներ

2021-ին, Բաժանմունքը 11 դիմում ստացաւ եւ նպաստ յատկացուց վեց դիմողի:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2021-ին յատկացուած «Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստ»-ի ընդհանուր պատկերը՝

Հայ ուսանողներ Փորթուկալի մէջ	Յատկացում (ԵԼՐՕ)	Քանակ	Է.	Ա.
Բարձրագոյն կրթութեան նպաստ – նոր կրթանպաստներ	25,450	6	4	2
Բարձրագոյն կրթութեան նպաստ – նորոգուած կրթանպաստներ	20,800	4	3	1
ԸՆԴԱՄԵՆԸ	46,250	10	7	3

6. Արտակարգ կրթանպաստներ

2021-ին Բաժանմունքը 26,789 ԵԼՐՕյի հինգ նպաստ յատկացուց:

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՏՈՒԵԱԼՆԵՐ

2021-ին Բաժանմունքը ստացաւ 373 դիմում. դիմողներուն 58%-ը կին էր իսկ 42%-ը տղամարդ: Դիմումներ ներկայացուեցան 28 երկիրներէ, անոնց 41%-ը Հայաստանէն էր, 20%-ը Լիբանանէն, 10%-ը Թուրքիայէն, 6%-ը Միջին Արեւելքէն, 5%-ը ԱՄՆ-էն, իսկ մնացեալ 18%-ը 23 տարբեր երկիրներէ: Դիմողներուն 39%-ը նպաստ ստացաւ:

2021-ին, Բաժանմունքը 236 կրթանպաստ յատկացուց ընդհանուր 919,591 ԵԼՐՕ գումարի:



2021-ի կրթանպաստի ծրագիր	Ցատկացում (ԵԼԹ)	Քանակ	Է.	Ա.
1. Հայագիտութեան կրթանպաստներ	382,059	26	17	9
2. Հայագիտութեան համար կարճաժամկետ դրամաշնորհներ	152,821	47	18	29
3. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի համար	20,453	18	15	3
4. Բարձրագոյն կրթութեան նպաստ	265,219	126	80	46
5. Հայ ուսանողներ Փորթուկալի մէջ	46,250	10	7	3
6. Արտակարգ կրթանպաստներ	26,789	5	2	3
Global Excellence կրթանպաստներ - կասեցուող	15,000	2	2	0
Արեւմտահայերէնով դասաւանդող ուսուցիչներու կրթանպաստի ծրագիր - կասեցուող	11,000	2	1	1
ԸՆԴԱՄԵՆԸ	919,591	236	142	94

2021-ին նախորդող տարիներէ 5 նպաստառու իր ակարտաճառը ներկայացուց: